

Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Հայաստան



ՏԵՂԵԿԱԹԵՐԹ #1

Հունվար 2017

Երևան, Հայաստան



Բովանդակություն

| | |
|--|----|
| Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ..... | 3 |
| Սննդի վերամշակում | 3 |
| Տեքստիլ արտադրություն | 6 |
| Շինարարություն | 8 |
| R&D | 11 |
| Տեղեկատվական տեխնոլոգիաներ..... | 12 |
| Կոսմետիկա..... | 13 |
| Դեղագործություն | 14 |
| Այլ ոլորտներ | 16 |
| Գործարար համագործակցության հարցումներ | 17 |
| Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ. | 19 |
| Եվրոպական նորություններ և միջոցառումներ..... | 21 |

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-երի միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՑ Հայաստանը ուշադրության է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

Մենդի վերամշակում



Գործարար համագործակցության առաջարկներ

Ընկերությունը սննդամթերք արտադրողներին առաջարկում է օրգանական մատուտակի փոշի

Դանիական ընկերությունը, որը մշակում և շուկայահանում է տարբեր տեսակի սննդամթերքներ և արդյունաբերության մեջ կիրառվող սննդային հավելումներ, առաջարկում է մատուտակի փոշի, որը կիրառվում է սննդի արդյունաբերության մեջ: Ընկերությունը փնտրում է սննդամթերք արտադրողների, ովքեր հետաքրքրված են այդ ապրանքատեսակի տարածմամբ և կաշխատեն տարածման համաձայնագրերի ներքո :

Ղիետտությունների կողմից մշակված ֆունկցիոնալ սննդային կոկտեյլներ արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Ռուսական ընկերությունը Մոսկվայի տարածաշրջանից արտադրում է ղիետտությունների կողմից մշակված մի շարք ֆունկցիոնալ սննդային կոկտեյլներ: Մեկ բաժին կոկտեյլը համապատասխանում է ողջ օրվա սննդի չափաբաժնին: Ընկերությունը փնտրում է գործընկերներ տարածման ծառայությունների համաձայնագրի համար: արտադրանքը վաճառելու համար :

Ծածկագիր. BORU20160601003

Մնունդ արտադրողը փնտրում է ներմուծողներ և դիստրիբյուտորներ

Իսրայելյան ընկերությունը, որն արտադրում է մրցունակ գներով բարձրորակ օրգանական սննդամթերք, փնտրում է օրգանական սննդի դիստրիբյուտորներ և ներմուծողներ ողջ աշխարհում: Ընկերության հիմնական արտադրատեսակներն են՝ օրգանական հրուշակեղենը, հացը, նախուտեստները, մրգերը և բանջարեղենները, ապուրները, թանձրուկները, օշարակները և այլն: Ընկերությունը ցանկանում է համագործակցել լավ փորձ ունեցող օրգանական սննդամթերքի դիստրիբյուտորների հետ, ովքեր կարող են վաճառել իրենց բրենդը մանրածախ վաճառքի կետերին կամ օրգանական ապրանքների սուպերմարկետներին:

Ծածկագիր. BOIL20160509001

Առանց գյուտեն սնունդ արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ և գործընկերներ

Իտալական գյուղատնտեսական և ֆրեզերային ընկերությունը, որն արտադրում է բնական, առանց գյուտեն սննդամթերք, փնտրում է դիստրիբյուտորներ և/կամ գործընկերներ, ովքեր հետաքրքրված են նոր ապրանքներով կամ մշակաբույսերով: Այդ իսկ պատճառով, ընկերությունը հետաքրքրված է տարածման ծառայությունների հաստատմամբ և/կամ արտադրական համաձայնագրերով:

Ծածկագիր. BOIT20160831001

Գործարար համագործակցության հարցումներ

Սննդամթերքի ոլորտում գործող ընկերությունը փնտրում է օրգանական բաղադրիչների մատակարարներ

Օրգանական սննդամթերքի ոլորտում գործող լեհական արտադրողը և դիստրիբյուտորը փնտրում է մատակարարներ: Իր արտադրանքի համար ընկերությունը կիրառում է միայն լավ որակի բաղադրիչներ՝ առանց տրանս-յուղերի, ալերգենների և կոնսերվանտների: Նրանք հետաքրքրված են հետևյալ արտադրատեսակներով՝ ալյուր, ձավարեղեն, ընկուզեղեն, բնական քաղցրացուցիչներ, չրեր և այլն: Ընկերությունը փնտրում է արտադրողներ, ովքեր կհամաձայնվեն սկսել երկարատև համագործակցություն՝

տարածման ծառայությունների կամ արտադրական համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BRPL20151209001

Մատակարարը, ով մասնագիտացած է բարձրորակ սննդամթերքի ոլորտում, փնտրում է դիստրիբյուտորներ

Իտալական ընկերությունը, որը մասնագիտացած է բարձրորակ սննդամթերքի ոլորտում՝ ընտրված ողջ աշխարհից, փնտրում է համեմունքներ՝ իր ներկա ապրանքների շարքը ամբողջական դարձնելու նպատակով: Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ, ովքեր կարող են մատակարարել ապրանքները՝ հարգելով բարոյական և կայուն աժեքները՝ տարածման համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով: Ընկերությունը սերտորեն համագործակցում է իտալական դիստրիբյուտորների ցանցերի հետ և լայն ցանցերում գործող գործակալների հետ:

Ծածկագիր. BRIT20161109001

Մեծածախ վաճառքով զբաղվող ընկերությունը փնտրում է սննդամթերքի մատակարարներ

Մննդի մեծածախ վաճառողը, որ գտնվում է Լեհաստանի հյուսիս-արևելքում, փնտրում է թարմ ցիտրուսային մրգերի, բանջարեղենների, զինու և քաղցրեղենի մատակարարներ: Այն առաջարկում է համագործակցություն՝ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BRPL20161130001

Ընկերությունը փնտրում է խմիչքներ

Լավ փորձ ունեցող Ռումինական դիստրիբյուտորը, որը մասնագիտացած է խմիչքների տարածման ոլորտում, տարածում է լավ հայտնի օտարերկրյա բրենդային խմիչքներ, ցանկանում է ընդլայնել տեսականին, հաճախորդների թիվը և մատակարարման տարածաշրջանները: Ընկերությունն առաջարկում է հանդես գալ իբրև դիստրիբյուտոր կամ գործակալ ռումինական շուկայում նոր խմիչքներ ներկայացնելու նպատակով:

Ծածկագիր. BRRO20161125003

Տեքստիլ արտադրություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Բարձրորակ տեքստիլ արտադրող ընկերությունը փնտրում է տարածման ծառայությունների համաձայնագրեր

Փոքր իտալական ընկերությունը, որն արտադրում է բարձրորակ տեքստիլ, փնտրում է գործընկերներ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո: Ընկերությունն արտադրում է բարձրորակ ապրանքներ գլանափաթեթներով և վերջնական արտադրանք տան ինտերիերի համար (կիրավում են խոհանոցում, անկողնում, լոգարանում և այլն), ինչպես նաև սպիտակեղեն:

Ծածկագիր. [BOIT20161109006](#)

Նորաձևության ոլորտում գործող ընկերությունը փնտրում է առևտրի միջնորդներ

Լեհական նորաձևության ոլորտում գործող ժամանակակից, տղամարդկանց և կանանց համար նախատեսված հագուստի դիզայները և արտադրողը փնտրում է համագործակցություն հագուստի դիստրիբյուտորների, մեծածախ վաճառողների և խանութների հետ, որոնք հետաքրքրված են լեհական դիզայների կողմից նախագծված հավաքածուի հագուստի ձեռքբերմամբ և վաճառքով:

Ծածկագիր. [BOPL20150415002](#)

Ընկերությունը փնտրում է գործընկերներ

Կանացի բարձրորակ հագուստի և արքեսուարների հունգարական դիզայների ապրանքանիշը շարունակում է գործել Հունգարիայում, բայց այժմ փնտրում է ֆինանսական կապիտալ ընկերությունը հետագա զարգացելու և ընդլայնելու նպատակով: Ընկերությունը նաև փնտրում է հուսալի գործընկերներ, դիստրիբյուտորներ, որոնք աշխատում են անմիջապես խանութների, առցանց մանրածախ և այլ վաճառքի կետերի հետ:

Ծածկագիր. BOHU20151202001

Կաշվից և կտորից պայուսակներ արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Թուրքական ընկերությունը, որը մասնագիտացած է կաշվից և կտորից պայուսակների և արքեսուարների արտադրության ոլորտում, փնտրում է գործընկերներ, ովքեր կցանկանան տարածել նման ապրանքներ: Արտադրության յուրաքանչյուր փուլում նրանք հետևում են ISO 9001:2008 և SEDEX հավաստագրերի որակներին՝ ապահովելով կայուն ապագա իրենց բիզնեսի համար: Հնարավոր գործընկերը պետք է ներառված լինի կաշվե պայուսակների և արքեսուարների վաճառքի ոլորտում այդ տարածաշրջանում:

Ծածկագիր. BOTR20160209001

Կոշիկ արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Հունգարական ընկերությունն արտադրում է երեխաների, տղամարդկանց և կանանց համար կոշիկների լայն տեսականի, ինչպես նաև՝ սպորտային կոշիկներ: Ընկերությունն արտադրում է նաև հատուկ ձևավորված, սուպինատորով մանկական կոշիկներ: Ընկերությունը նպատակ ունի գտնել գործընկերներ՝ արտերկրում իր բարձրորակ ապրանքները տարածելու նպատակով:

Ծածկագիր. BOHU20150917003

Ռուսական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ և առևտրային գործակալներ

Ռուսական ընկերությունը, որն արտադրում է կոմբինեզոններ գեղարվեստական մարմնամարզության, ռիթմիկ մարմնամարզության, գեղասահքի և այլ սպորտային մարմնամարզությունների համար, փնտրում է գործընկերներ այլ երկրներում՝ առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո աշխատելու նպատակով:

Ծածկագիր. BORU20160803004

Գործարար համագործակցության հարցումներ

Երեխաների հագուստ արտադրողը փնտրում է ենթակապալառուներ

Ֆրանսիական ընկերությունը, որը մասնագիտացած է 3 ամսեկանից մինչև 10 տարեկան երեխաների բարձրորակ հագուստի արտադրության ոլորտում, փնտրում է նոր գործարաններ, որոնք կգործեն ընկերության ցուցումներով և բնութագրիչներով և կարտադրեն բարձրորակ ապրանքներ:

Ծածկագիր. **BRFR20160307001**

Դիզայները փնտրում է լվացվող կտորից և կաշվից պայուսակներ արտադրողի

Երիտասարդ հոլանդական ՓՄՁ-ն, որը սկսել է գործել վերջերս՝ 2016թ. -ից, նախագծում և վաճառքում է բարձրորակ պայուսակներ՝ կարված լվացվող կտորից և կաշվից: Ապրանքները վաճառվում են միջազգային շուկայում: Ընկերությունը փնտրում է արտադրող, որը լավ փորձառություն ունի բարձրորակ լվացվող կտորի և կաշվե պայուսակների արտադրության ոլորտում:

Ծածկագիր. **BRNL20160916001**

Շինարարություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Երկարատև փորձ ունեցող շինարարական ընկերությունը փնտրում է գործակալ

Սերբական ընկերությունը, որը մասնագիտացած է շինարարության ոլորտում, փնտրում է գործակալ՝ իր ծառայությունները Եվրոպական շուկայում ներկայացնելու համար: Ընկերությունը կառուցում և հարմարեցնում է բնակելի, կոմերցիոն և արդյունաբերական շինությունները հաճախորդի պահանջներին՝ կիրառելով վերջին շինարարական տեխնոլոգիաները:

Ծածկագիր. **BORS20140205003**

Օգտագործված շինարարական մեքենաների (սարքավորում) վաճառքի գծով մասնագետը փնտրում է ներմուծողներ նոր շուկաներում

Օգտագործված շինարարական մեքենաների (սարքավորում) վաճառքի գծով մասնագետը Միացյալ Թագավորությունից փնտրում է ներմուծողներ և վաճառքի գծով մասնագետներ նոր շուկաներում՝ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո աշխատելու նպատակով: Ընկերությունը, որը զբաղվում է տարբեր տիպի շինարարական սարքավորումների վաճառքով, հաշվի կառնի ցանկացած տարածաշրջան:

Ծածկագիր. BOUK20160628005

Ռուսական ինժեներական ընկերությունն առաջարկում է շինարարական ծառայություններ

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է արագ կառուցվող պողպատյա տների շինարարության ոլորտում, փնտրում է գործընկերներ նավթի, գազի ոլորտներից, սպորտային կոմպլեքսների շինարարության, գյուղատնտեսական կառույցների շինանարության ոլորտներից՝ ծառայությունների համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BORU20161011005

Շինարարական ընկերությունն օտարերկրյա ներդրողներին է առաջարկում իր ծառայությունները

Լեհական միջին չափերի ընկերությունը, որը մասնագիտացած է արդյունաբերական և առևտրային շինարարության մեջ, փնտրում է օտարերկրյա գործընկերներ, ովքեր ցանկանում են ներդրում կատարել Լեհաստանում: Ընկերությունը կարող է ծառայություններ տրամադել իբրև գլխավոր կապալառու:

Ծածկագիր. BOPL20160314001

Արտադրողը փնտրում է առևտրային գործակալներ և դիստրիբյուտորներ

Տարբեր տիպի պողպատյա պանելների ապակենման եմալներ կամ շինարարության համար այլ նյութեր (թունելների, գետնանցումների, օդանավակայանների, գնացքների կայարանների և դեկորացիաների (դեկորատիվ պանելներ) ինտերիերի համար շինարարական ծածկույթներ) արտադրող իսպանական ընկերությունը ունի փորձ և սեփական տեխնիկական գրասենյակն ու ինժեներական բաժինը, որը ընկերությանը հնարավորություն է տալիս տարբեր և բազմազան ծրագրերի համար գտնել ու տրամադել լավագույն լուծումները: Ընկերությունը փնտրում է առևտրային գործակալներ և դիստրիբյուտորներ արտերկրում:

Ծածկագիր. BOES20150324001

Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Ռուսական ընկերությունը Կուրսկի տարածաշրջանից, որը մասնագիտացել է

ինտերիերի/էքստերիերի ավարտական աշխատանքների համար նախատեսված շինանյութերի (PVC պանելներ «Ֆրիզով», PVC պանելներ "Ֆրիզեն", բազմագույն, PVC պանելներ ակրիլային ծածկույթներով, առաստաղի պանելներ PVC թեք բացվածքներով, շենքերի բարակ ծածկույթներ HDF 3.0 մմ, թիթեղյա պանելներ MDF 6.0 մմ, առանցքային ծածկույթներ HDF\MDF, և այլն) արտադրության ոլորտում, տարածման ծառայությունների ներքո փնտրում է գործընկերներ ԵՍ և ԱՊՀ երկրներում:

Ծածկագիր. **BORU20151128004**

Գործարար համագործակցության հարցումներ

Լեհական ընկերությունը ցանկանում է հանդես գալ իբրև շինարարական ընկերությունների գործակալ

Լեհական ընկերությունը, որը մասնագիտացած է փոքր և միջին չափերի պողպատյա կոնստրուկցիաների արտադրության ոլորտում, ինչպես օրինակ՝ աստիճանները, պատշգամբները, բազրիքները, բաքերը, ճանապարհային անվտանգության պատնեշները, ցանկանում է հանդես գալ իբրև գործակալ՝ իր գործընկերների արտադրանքը առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո ներկայացնելու նպատակով:

Ծածկագիր. **BRPL20161006001**

Որոնվում են պողպատյա և ալյումինե խողովակների նյութեր արտադրող մատակարարներ և գործընկերներ

Մեծ Բրիտանիայում գործող բիզնեսը մշակել է հեծանիվների տնային ծածկի նոր ձև: Այն տրամադրում է ավելի լավ եղանակային պաշտպանվածություն, քան սովորական ծածկերը և ունի պատից կախված շրջանակ, որն ապահովում է անվտանգությունը և թույլ է տալիս ծածկոցին ծավելել բնակարանի պատի հարթությանը համապատասխան, երբ չի կիրառվում: Պատրաստված լինելով պողպատից/ալյումինի խողովակներից և անջրանցիկ գործվածքներից, այն պաշտպանում է անբարենպաստ եղանակներից և ապահովում է անվտանգությունը:

Ընկերությունը փնտրում է արտադրական գործընկերներ հետևյալի համար՝

- ✓ թեք/եռակցված խողովակներ
- ✓ կտրված/կարված գործվածքից ծածկեր և
- ✓ հավաքման համար ապրանքներ/տուփեր:

R&D



FETOPEN-01-2016-2017-RIA – Վերափոխվող ընկերությունների շարունակական վերափոխումների ուսումնասիրություն

Մակեդոնական էկոնոմիկայի ֆակուլտետը մշակել է ծրագիր H2020-FETOPEN-01-2016-2017-RIA մրցույթի նրբո և փնտրում է ծրագրի գործընկերներ, որոնք փորձ ունեն իմիտացիոն մոդելավորման, մոդելավորման և հետազոտական ուսումնասիրության ոլորտում: Ծրագրի նպատակն է ուսումնասիրել վերափոխվող ընկերությունների շարունակական վերափոխումները և գործարկել փոփոխման մոդելը շարունակական վերափոխումների համար՝ կիրառելով Գործարկվող միասնական մոդելավորման լեզուն:

Ծածկագիր. RDMK20161229001

Erasmus+, KA1-որոնվում են դպրոցներ և մասնագիտական վերապատրաստման կենտրոններ

Իտալական բիզնես կենտրոնը մշակում է ծրագիր Erasmus+, KA1 շարժունակություն ծրագրի ներքո, որը նախատեսված է մասնագիտական վերապատրաստում ստացողների և աշխատակազմի վերապատրաստման համար: Ծրագիրն ուղղված է մշակելու կորպորատիվ ուսուցման փուլեր ուսանողների համար (աշխատանքի վրա հիմնված ուսուցում-WBL): Ընկերությունն ունի 6 տարվա փորձ միջազգային ծրագրերում բոլոր տեխնիկական արդյունաբերական դպրոցներում: Կազմակերպությունը փնտրում է ընկերություններ և հասարակական կենտրոններ (դպրոցներ/ մասնագիտական վերապատրաստման կենտրոններ)՝ աջակցելու համար հարմարությունների և թրեյնինգների առումով:

Ծածկագիր. RDCH20161108001

ՓՄՁ գործիք – անհրաժեշտ են կլինիկական հետազոտությունների գործընկերներ մշակված ֆիզիկական և ճանաչողական թերապիաների համար նախատեսված խաղային

վարժությունները մշակելու և վավերացնելու նպատակով

Սկսնակ ընկերությունը Միացյալ Թագավորությունից մշակել է բժշկական ծրագիր, որը ավանդական ֆիզիոթերապիայի վարժությունները վերածում է ինտերակտիվ վիդեո խաղի: Այն կիրառվում է ն' տանը, ն' կլինիկաներում, իսկ բժիշկները կարող են հիվանդներին հսկել հեռակա կարգով: Ընկերությունն այժմ փնտրում է կլինիկական/հետազոտական գործընկերներ՝ ֆիզիկական և ճանաչողական թերապիաների համար նախատեսված խաղային վարժությունները մշակելու և վավերացնելու նպատակով, որպեսզի դիմեն ՓՄՁ գործիքի մրցույթին: Այն առողջության և բարեկեցության S2S շուկայի համար կլինի արագ ներդրում:

Ծածկագիր. RDUK20161005002

Տեղեկատվական տեխնոլոգիաներ



Գործարար համագործակցության առաջարկներ

SS ընկերությունն առաջարկում է ծրագրերի մշակման ծառայություններ

Թունիսյան SS ընկերությունը, որը մասնագիտացած է Java Frameworks, Big Data, Cloud Computing և Content Management ծրագրերի մշակման ոլորտում, փնտրում է գործընկերներ, ովքեր հետաքրքրված են ծառայությունների մատուցման, առևտրային համաձայնագրերով, որոնք ներառում են՝ ծառայությունների մատուցում, արտադրական համաձայնագրեր, ինչպես նաև՝ տեխնիկական համաձայնագրեր եվրոպական երկրներում, հատկապես՝ Ֆրանսիայում և Գերմանիայում:

Ծածկագիր. BOTN20160321001

Կանադական SS ընկերությունն առաջարկում է տվյալների փոխանակման (EDI)

Թարգմանություն և ինտեգրման ծառայություններ

Կանադական SS ընկերությունն ունի եզակի և հասանելի տվյալների փոխանակման թարգմանության էլեկտրոնային ծառայություն, որը կարող է բարելավել բիզնես կապերը և ընկերության գործունեությունն ընդհանրապես, կարևոր փաստաթղթերի, ինչպես օրինակ՝ գնման պատվերների և ապրանքագրերի արդյունավետ էլեկտրոնային փոխանակմամբ: Ընկերությունը հետաքրքրված է եվրոպական ընկերությունների հետ համագործակցությամբ, որոնք կարող են օգուտ քաղել իրենց տեխնոլոգիայից ծառայությունների համաձայնագրերի ներքո համագործակցելու դեպքում:

Ծածկագիր. BOCA20160705001

Առաջարկվում են պատվերով արված SS լուծումներ

Հունգարական ընկերությունը, որը զբաղվում է պատվերով SS լուծումների պլանավորման և մշակման ոլորտում, փնտրում է համագործակցություն ծառայությունների մատուցման կամ աութսորսինգային համաձայնագրերի ներքո: Համատեղ ձեռնարկության հիմնումը ևս հնարավոր է հետագա փուլերում:

Ծածկագիր. BOHU20160309001

Գործարար համագործակցության հարցումներ

Դիստրիբյուտորը փնտրում է մատակարարներ

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է անվտանգության, հսկողության համակարգերի և տեսահսկման համակարգերի ոլորտում, փնտրում է նման ապրանքներ արտադրողներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BRRU20160914001

Կոսմետիկա



Business Support on Your Doorstep

Գործարար համագործակցության առաջարկներ

Նորարարական կոսմետիկա արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Իսրայելյան ընկերությունը, որը մասնագիտացած է կոսմետիկ ապրանքների մշակման ոլորտում՝ հիմնականում բնական, պատրաստված բույսերի խտանյութերից և յուղերից, փնտրում է նոր գնորդներ ողջ աշխարհում: Ընկերության կոսմետիկ գիծը ներառում է մազահեռացման, դեմքի, մազերի խնամքի միջոցներ: Ընկերությունն ակնկալում է տարածման ծառայությունների համաձայնագրեր:

Ծածկագիր. BOIL20161116001

Ընկերությունը, որն արտադրում է բնական կոսմետիկա, փնտրում է դիստրիբյուտորներ

Հունական ընկերությունը, որը գտնվում է Կրետեում, մասնագիտացած է բնական կոսմետիկայի արտադրության և վաճառքի ոլորտում: Ընկերությունը ցանկանում է մուտք գործել նոր շուկա՝ գործակալների և դիստրիբյուտորների միջոցով: Ընկերությունն արտադրում է մի շարք ապրանքներ՝ կիրառելով բնական բաղադրիչներ բուսական էքստրակտներից, բուժիչ բույսերից, ձիթայուղից և հավաստագրված ալոե վերայից:

Ծածկագիր. BOIL20161116001

Խնամքի համար նախատեսված սարքավորումներ արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Լեհական ընկերությունը, որը գործում է կոսմետիկայի և կոսմետոլոգիայի ոլորտում, առաջարկում է սարքավորումներ, որոնք արտադրվում են բացառապես Լեհաստանում և օգնում են լուծել հետևյալ խնդիրները՝ ցելյուլիտ, կնճիռներ, կախված կոպեր, մաշկի ակոսիկներ, սպիներ: Սարքավորումները կիրառվում են նաև մազահեռացման, ճարպերի նվազեցման, դեմքի մաշկի ձգման համար: Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ, ովքեր կարող են խթանել և վաճառել առաջարկվող սարքավորումները գեղեցկության սրահներին, կլինիկաներին, սպա կենտրոններին Եվրոպայում և դրանից դուրս:

Ծածկագիր. BOPL20160621001

Դեղագործություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Ընկերությունը փնտրում է եվրոպական գործընկերներ մեկանգամյա կիրառման բժշկական պարագաների համար

Մատակարար ընկերությունը Միացյալ Թագավորությունից առաջարկում է մեկանգամյա կիրառման բժշկական պարագաների լայն տեսականի եվրոպական դիստրիբյուտորներին: Տեսականին ներառում է պարագաներ, որոնք ունեն կարևոր նշանակություն որակյալ բժշկական ծառայությունների մատուցման համար, համապատասխանում են առողջապահական և անվտանգության ստանդարտներին: Տեսականին ներառում է՝ ձեռնոցներ, գոգնոցներ, խոնավ անձեռոցիկներ:

Ծածկագիր. BOUK20160921006

Շնչառական սարքավորումներ արտադրող ռուսական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Ռուսական ընկերությունն արտադրում է շնչառական վարժությունների համար նախատեսված սարքավորում, որը նպաստում է շուրջ 250 հիվանդությունների բուժմանը և կանխարգելմանը: Ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ տարածման ծառայությունների ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BORU20160125001

Բարձրորակ բժշկական սարքավորումներ արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից, որը մասնագիտացած է բարձրորակ, ծախսային առումով արդյունավետ վիրահատական, անզգայացման և շնչառական ուղիների համար նախատեսված մեկանգամյա կիրառման լուծումներում, փնտրում է դիստրիբյուտորներ՝ իր

Գործարար համագործակցության հարցումներ

Ընկերությունը, որը ներկայացնում է բազմազգ արտադրողներ, փնտրում է առևտրային գործակալության համաձայնագրեր

Լավ հաստատված իսրայելյան ընկերությունը ներկայացնում է բազմազգ արտադրողներ դեղագործության, բժշկական սարքավորումների, բժշկական և մանկական սննդի ոլորտներում: Ընկերությունը փնտրում է այդ ապրանքատեսակների բարձր ստանդարտներով արտադրողներ կամ մատակարարներ: Ընկերությունը ցանկանում է գործել էքսկլյուզիվ առևտրային գործակալության համաձայնագրի ներքո:

Ծածկագիր. BRIL20161116001

Այլ ոլորտներ



Business Support on Your Doorstep

Գործարար համագործակցության առաջարկներ

Պահանջվում են դիստրիբյուտորներ բարձրորակ և էկոլոգիապես մաքուր մաքրող միջոցների և արքեստուարների համար

Լեհական ընկերությունն արտադրում է բարձրորակ և էկոլոգիապես մաքուր մաքրող միջոցներ, որոնք կարող են կիրառվել լաբորատորիաներում, ներկերի արտադրության գործարաններում, հյուրանոցներում, ռեստորաններում, սրճարաններում և սպա կենտրոններում: Ընկերությունն ունի նաև ապրանքատեսակներ՝ նախատեսված նուրբ մակերեսների մաքրման համար, որոնք կարող են կիրառվել մեքենաների և օպտիկական լինզաների մաքրման համար: Ընկերությունը շուկայում գործում է շուրջ 20 տարի և փորձ ունի միջազգային համագործակցության ոլորտում: Ընկերությունը փնտրում է բիզնես

գործընկերներ, ովքեր հետաքրքրված են տարածման ծառայություններով:

Ծածկագիր. BOPL20160107003

Ղիստրիբյուտորը փնտրում է ապրանքներ տարածման համար

Բուլղարական ներմուծող-վաճառող ընկերությունը փնտրում է հավելյալ ապրանքներ՝ անկախ օտարերկրյա արտադրողներից. օգտագործված մեխանիզմներ և սարքավորումներ՝ դրանք բուլղարական շուկա ներմուծելու և ներկայացնելու համար:

Ծածկագիր. BOIT20160905001

Կահույք արտադրողը փնտրում է ղիստրիբյուտորներ

Մակեդոնական ընկերությունը, որը մասնագիտացած է բազմակի կիրառման, ամուր և գրավիչ բազմոցների արտադրության ոլորտում, շուրջ 10 տարվա արտադրական ավանդույթներ ունի կահույքի նախագծման ոլորտում: Այն տարածում է իր ապրանքները միջազգային շուկայում (Գերմանիա, Իսպանիա, Չեխիայի Հանրապետություն և Սլովենիա): Ընկերությունը փնտրում է ղիստրիբյուտորներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո իր ապրանքներն օտարերկրյա շուկաներում վաճառելու նպատակով:

Ծածկագիր. BOMK20161012001

Ընկերությունը փնտրում է ղիստրիբյուտորներ արտերկրում

Ֆրանսիական ՓՄՁ-ն առաջարկում է փոքր, ամուր սարքավորում գործածելու համար հեղուկ և մածուցիկ լուծույթների շարք: Այն կիրառվում է գյուղմթերքի, կոսմետիկայի, դեղագործության, քիմիական, նավթաքիմիական և կենսատեխնոլոգիաների արդյունաբերության մեջ:

Ծածկագիր. BOFR20151013004

Գործարար համագործակցության հարցումներ

Առևտրային ընկերությունը փնտրում է Էկոլոգիապես մաքուր և նորարարական արտադրանք

Լեհական ՓՄՁ-ն, որը փորձ ունի Էկոլոգիապես մաքուր ապրանքների մարքեթինգի ոլորտում, փնտրում է տեխնոլոգիաներ և Էկոլոգիապես մաքուր ապրանքներ արտադրողների՝ դրանք լեհական շուկայում ներկայացնելու համար: Ընկերությունն ակնկալում է առևտրային գործակալության համաձայնագրեր:

Ծածկագիր. BRPL20151221001

Արտադրողը փնտրում է պլաստիկի մատակարարներ

Խորվաթական ընկերությունը, որը նախագծում, մշակում և արտադրում է պլաստիկ փաթեթավորման ապրանքներ, փնտրում է երկկողմանի պոլիստիրոլ (OPS) և պոլիվինիլքլորիդից (PVC) տարբեր գույնի փայլաթիթեղներ: Համագործակցությունը հնարավոր է առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BRHR20160720001

Մարքեթինգի և վաճառքի գծով գործակալը փնտրում է էլեկտրոնային բաղադրիչներ արտադրողներ

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից փնտրում է պասիվ, փոխկապակցված և էլեկտրամեխանիկական էլեկտրոնային բաղադրիչներ արտադրողներ երկարատև համագործակցության համար այն ընկերությունների հետ, որոնք հետաքրքրված են Միացյալ Թագավորություն և Իռլանդիա արտահանմամբ: Բացի վաճառքի գործունեությունից, ընկերությունը տրամադրում է շուկայի հետազոտություն և մարքեթինգային աջակցման ծառայություններ:


Ծածկագիր. BRUK20160711001

Ընկերությունը փնտրում է պանելային մետաղալարեր (tri-rated cables) արտադրող ընկերություններ

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից, որը բաղադրիչներ մատակարարող է հանդիսանում, արտադրական համաձայնագրերի ներքո փնտրում է պանելային մետաղալարեր արտադրող ընկերություններ: Ընկերությունը փնտրում է կայուն գործընկեր պանելային մետաղալարերի լայն տեսականի արտադրելու նպատակով: Դրանք պետք է լինեն կայուն բարձր ջերմաստիճանի դեպքում, հրակայուն, նախագծված լինեն սարքավորումային պանելների, շարժիչի մեկնարկիչների և սնուցման անջատման սարքավորումների համար: Ճիշտ գործընկեր գտնելու դեպքում կլինեն մեծածավալ պատվերներ արտադրական համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BRUK20161121001

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

Ընկերությունը փնտրում է տեխնիկական կամ հետազոտական համագործակցության համաձայնագրեր

Հունական ինժեներական ՓՄՁ-ն առաջարկում է մոդելավորման փաթեթ հիմնված սահմանային էլեմենտների մոդելի վրա(BEM): Այդ փաթեթը հնարավորություն է տալիս լուծել ինժեներական կոմպլեքս խնդիրներ՝ ընդգրկելով կիրառության լայն տարածք, որը նախկինում հնարավոր չէր կամ շատ թանկ էր այլ մրցունակ մեթոդների հետ համեմատած: Մինևույն ժամանակ մեթոդը շատ արագ է և ճշգրիտ: Ընկերությունը փնտրում է տեխնիկական կամ հետազոտական համագործակցության համաձայնագրեր, ինչպես նաև՝ տեխնոլոգիայի լիցենզավորում:

Ref : TOGR20161220001

Հեղուկի գերկրիտիկական բյուրեղի և ինժեներական մասնիկ բարելավելու համար կենսամատչելիությունը

Դեղագործական ՓՄՁ-ն Միացյալ Թագավորությունից, թերապիաների առավել արդյունավետ նախագծման համար մասնագիտացած է հեղուկի գերկրիտիկական բյուրեղի և ինժեներական մասնիկի տեխնոլոգիաների ծրագրերում: Ընկերությունը փնտրում է կազմակերպություններ, որոնք գործում են դեղագործության ոլորտում և փնտրում են այլընտրանքային մեթոդներ՝ նոր քիմիական տարրերի (NCEs) լուծելիությունը և կենսամատչելիությունը բարելավելու նպատակով: Գործընկերությունը կարող է լինել լիցենզիոն, տեխնիկական կամ հետազոտական համաձայնագրերի ներքո:

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

Ղեղազործական ընկերությունը փնտրում է նորագույն վաղ շրջանի հակաբորբոքային դեր տանող մոլեկուլներ

Միացյալ Թագավորությունում հիմնված ղեղազործական ՓՄՁ-ն փնտրում է նորագույն փոքր մոլեկուլներ, որոնք կգործեն Գրամ-բացասական բակտերիաների դեմ պայքարում, հատկապես դիմացկուն հարուցիչների նկատմամբ: ՓՄՁ-ն հետազայում կմշակի այդ նորագույն միացությունները՝ դրանց արդյունավետությունը և պրոֆիլների անվտանգությունը բարելավելու համար, նպատակ ունենալով նաև լիցենզավորել բարելավված մոլեկուլները առավել մեծ ղեղազործական ընկերությունների համար՝ դրանք մտցնելով շուկայ: Ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ համալսարաններ, հետազոտական ինստիտուտներ և ՓՄՁ-ներ՝ լիցենզիոն կամ տեխնիկական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ref : TRUK20160720001

Դիսկային արգելակ՝ կաղապարման տեխնոլոգիայի համար

Կորեական ՓՄՁ-ն, որն արտադրում է կաղապարման և մետաղազործական գործարանների ապրանքներ փնտրում է գործընկերներ, որը փորձ ունի դիսկային արգելակի կաղապարի ոլորտում՝ նրա հետ լիցենզիոն համաձայնագրերի, տեխնիկական աջակցությամբ առևտրային համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով: Գործընկերը պետք է կարողանա տրամադրել այդ մասշտաբով տեխնոլոգիա տնտեսական հիմքի վրա նախագծման, տեղադրման և ցուցադրության համար: Ընկերությունը նաև բաց է հետազոտական համագործակցության համաձայնագրերի համար:

Ref : TRKR20161129008

Եվրոպական նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են 2017 թ. -ի մարտ, ապրիլ, մայիս ամիսների ընթացքում կազմակերպվող միջոցառումները:

Մարտ

| | |
|------------|---|
| 01/03/2017 | <p>Farmaforum 2017. Pharma, cosmetic and biotech brokerage event Madrid (Spain)</p> <p>Միջոցառման հիմնական նպատակն է բնական գիտությունների, դեղագործության, բիոֆարմայի, կոսմետիկայի և լաբորատոր տեխնոլոգիաների ոլորտում գործող ընկերությունների, հետազոտական ինստիտուտների, համալսարանների և այլ կազմակերպությունների համար հանդպման ֆորում կազմակերպելը: Մասնակիցներին կտրվեն հնարավորություններ համագործակցության և բիզնեսի վրա հիմնված տեխնոլոգիաների համար այն հանդիպումների միջոցով, որոնք ձեռք են բերվել երկկողմանի պայմանավորվածությունների համաձայն:</p> |
| 08/03/2017 | <p>Ecobuild Matchmaking 2017 London (United Kingdom)</p> <p>ՁեՅ-ը կազմակերպում է B2B համագործակցության հաստատման միջոցառում Ecobuildի շրջանակներում: Ոլորտները հետևյալն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Կայուն դիզայն ✓ Նորարարական և արդյունավետ էկո-տեխնոլոգիաներ ✓ Նոր շինանյութեր և տեխնոլոգիաներ ✓ Համակարգեր և սարքավորումներ՝ կիրառելով նոր էներգիայի այլընտրանքային աղբյուրներ |

| | |
|------------|---|
| | <ul style="list-style-type: none"> ✓ Վերականգնվող էներգիա ✓ Կենսաէներգիա ✓ Սմարթ շինություն ✓ Խոհանոցի և լոգասենյակի դիզայն: |
| 16/03/2017 | <p>ISH 2017 Brokerage Event Germany (Frankfurt am Main)</p> <p>ISH 2017-ը աշխարհում առաջատար տոնավաճառներից է նվիրված լոգարանի և սանիտարական, սարքավորման, ջեռուցման, օդափոխման, շինությունների և էներգիայի տեխնոլոգիաներին: Միջոցառման թիրախ հանդիսանում են արտադրողները, դիստրիբյուտորները, մեծածախ վաճառողները, մանրածախ վաճառողները, ծառայություններ տրամադրողները, արհեստագործները, ինժեներները և պլանավորողները վերոհիշյալ ոլորտներից:</p> |
| 20/03/2017 | <p>CeBIT 2017 Hannover (Germany)</p> <p>Այս միջոցառումը Հաննովերի ամենամեծ և միջազգայնորեն ներկայացված համակարգչային ցուցահանդեսն է: Թեմաները հետևյալն են՝ Մեծ և ամպային տվյալներ, Բիզնես էլեկտրոնիկա և սարքավորումներ, Ամպային պահեստավորում և տվյալների գործարան, Առևտուր և բանկային գործ, Հաղորդակցություն և ցանցային աշխատանքներ, ECM, Մուտքագրում / Արդյունք, ERP & HR, Անվտանգություն, հետազոտություն և նորարարություն:</p> |

Ապրիլ

| | |
|------------|--|
| 04/04/2017 | <p>H2020 Brokerage Event: Nanotechnologies and Advanced Materials (N&M) Cambridge (United Kingdom)</p> <p>Սա մեկօրյա անվճար միջոցառում է, ուր կներկայացվեն մրցույթի առաջարկությունները, ներկա գաղափարները և Եվրոպական հանձնաժողովի ակնկալիքները: Այն առաջարկում է եզակի միջազգային ցանցային փորձ հետագա համագործակցության ամրապնդման համար:</p> |
|------------|--|

| | |
|------------|--|
| 09/05/2017 | <p>EEN Brokerage Event at ICT Spring 2017 Luxembourg (Luxembourg)</p> <p>Համագործակցության հաստատման այս միջոցառումը Ձեր ընկերությանն առաջարկում է հետևյալը`</p> <ul style="list-style-type: none">• երկօրյա բիզնես հանդիպումներ• հնարավորություն ստեղծելու ամուր համագործակցություն S2S ոլորտում• ցանցային լայն հնարավորություններ թվային ոլորտի առաջատարների, նորարարության ոլորտի մենեջերների, հետազոտողների, սկսնակների և այլոց համար• հնարավորություն գտնելու ճիշտ բիզնես գործընկերներ մեկ վայրում: |
|------------|--|

Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան:

Նշում: *Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:*

Հարգելի գործարար,

Գրանցվեք հետևյալ հղմամբ՝

<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Customer/Create?shid=32>

db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799 և ստացեք անվճար
հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես
առաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:

Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են: